

ծողութեան՝ առժամական խորհուրդներ երկնելով, բաւական ժամանակ Պոսեցի աղջիկ մը առնելու հաղար ու մէկ վտանգներէն արտաւաճ փախար ըլլալէն ետքը :

Ի՞նչ պարագաներու մէջ Մարտիրոս Սարգսլըգիտան հանդիպած էր հերմիքեան Մարկոս Էֆէնտիքին եւ ի՞նչպէս այդ հանդիպումը յանգած էր անոր աղջկան ձեռքը խնդրելու առաջարկին :

Սարգսլըգեան ընտանիքին վերընկալման մասին աւագ կարեւորութիւն ունեցող այդ հարցը պիտի ջնանգը պարզել մեր պատմութեան երկրորդ գլխին մէջ :

ԵՐՈՒՄԱՆԻ ՍՏԵԱՆ

(Շուրմակիկ)



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

1817—1900

— 0 —

Հայոց աղքատ ընդունակ եղաւ ծննդու ԺԹ դարում երկու խոշոր մարդ, երկու հանճար. Յովհաննէս Այվազովսքի եւ Պետրոս Ազամեան : Անհերքելի է, որ հայերի մէջ միշտ գոյութիւն ունեցել են տաղանդներ տարրեր տեսակի եւ մեծութեան, որոնք գրչի, վրձնի կամ բեմական արուեստի շնորհիւ ընդհանուր ուշադրութիւն են գրաւել : Նոյնպէս զանազան ասպարէզներով իրանց ձիրքը ցոյց տուող անձինք միշտ անպակաս են եղել, սակայն այդ երկու հակառակ աշխարհի մի տարրերն ալ երեւոյթ առաջացրին, որ ոչ թէ միայն իրանց խաւար ու ողորմելի ազգին փառք ու պարծանքը եղան, այլ կարող էին նոյն իսկ ամէն մի լուսաւորեալ ազգին պատել զերեւ : Ափսոս, Ազամեան՝ Նա աշխարհ եկաւ անժամանակ, այսինքն երբ, երա համար նպատաւոր հող չկար պարտատուած : Հայոց աղքատ ընտանեաց նրա մեծութիւնը, չհասկցաւ նրա նշանակութիւնը, եւ նա մատառեց այնպիսի դժբաղդ վիճակի, որ երբ հաշուած էին նրա օրերը անկողնում պառկած, վերջին մուրազկանի նման կոպէկներն ողորմութեան էր օպպաւում «ազգասէր» հայերից : Այս առթիւ կնիքը անցնելով մնայ մեր ազգի ճակատին :

Այվազովսքին երջանիկ մարդ էր : Երջանիկ էր նախ եւ առաջ այն պատճառաւ որ ստիպուած չէր հայակական նեղ շրջանի մէջ գործելու, նրա անպարէզը լայն էր :

Ոչ թէ միայն հայոց փոքրիկ տախկան ազգը,

այլ նորինիս Ռուսաստանի լայնածաւալ կայսրութիւնը մինչեւ այսօր չի ծնել մի երկրորդ նկարիչ, որ իր հանճարի խոշորութեամբ հասաւարար էր Այվազովսքին : Ընթարիւմ է՝ Ռուսաստանի ունեցիւր է անուանի եւ ականաւոր գեղարուեստագէտներ, բայց նորանից ոչ մէկն իսկ այնպիսի աստատօրէն չէր վարձատրուած երկնքից ստեղծագործական ուժով եւ բանաստեղծական ոգւով, ինչպէս իՏէր հանգուցեալ Ժիրաւուն : Եւ նա մեծ ծառայութիւն մտնուցեց ուսական արուեստին, թէ՛ իրրեւ ծովանրկարութեան նախաձեռն եւ թէ՛ ուսաց նկարչութեան հետ երկրագիշերին ծանօթացնող : Նրանից առաջ ոչ մի առաւ գեղարուեստագէտ չէր ձեռնարկել պատկերանկէսներ բանալու արեւմտեան մեծ քաղաքներում, ինչպէս Պարիզ, Լոնտոն, Հոմ, Վենետիկ, Փարիս, Մարթի, եւն : Նա իր ուղղութեամբ ուսմանդի էր, իր ժամանակին մեծ անուն վաստակեց ամէն տեղ : Բոլոր կրեանիկներն միաձայն ընդունեցին նրա տաղանդի մեծութիւն եւ ինքնուրուեստիւն :

Ընթարիւմ է՝ չառ անգամ էլ իրաւացի կերպով պախարակուած էին անյաջող եւ շտապով նկարուած պատկերներն հրապարակ հանելու մասին : Եւսակայն չէին ուրաւում, որ այդ մարդուն մէջ տարրերնակ կրակ կայ :

Բացի բոլոր անհրաժեշտ յատկութիւններէց մեծ արտիւս լինելու համար, նոյնպէս անաւման աշխատասէր էր իւշխուժ, հաւաքգէտ եւ ատկուս, Նա իր երկարամիտ կեանքի ընթացքում բազմաթիւ օգնչելի գործեր առատացրեւ, համարեալ բացառապէս ծովի տեսաբանները, որոնք ցրուած են Սախայից պէտմէ մինչեւ Եւրոպա եւ Ամերիկա, բայց եւ այնպէս է խոստովանուել, որ կրկնակի բազմաթիւ անկատար եւ միտքանի նկարներ հանդէս հանեց, որ իսկապէս ցանկալի չէր : Իրրեւ «մարինիստ» կարծիքով առաջնակարգ էր, բաղդատելով եւրոպական հոչակ վայելող նկարիչներին հետ, իսկ իրրեւ ծովի երգիչ-բանաստեղծ միակ էր : Այվազովսքի ամենատարեր աշխատութիւններ գտնուում են Ռուսաստանի զանազան միւլգէներու մէջ եւ թագաւորազնայեւրի պալատներում : Նրանց թուում կան այնպիսի ստեղծագործութիւններ, որ ընդհանուր գեղարուեստի պատմութեան համար միշտ ներշնչանակութիւն պէտք է ունենան :

Ի՞նչպէս չանուանել հանգուցեալ արտիստին «երջանիկ մարդ» : Երբ նրան զարողեցաւ այնքան երկար ապրել, որ կարող եղաւ իւր խօսքը կատարելապէս վերջացնելու եւ հրաժեշտ տուեց երկրաւոր կեանքին այն ժամանակ միայն, երբ այլեւս բան չուէր ստելու : Բայց ի այդ իւր մարդոջ փառքը իւր աշխօղի տեսաւ :

Իրրեւ մարդ բարեգործ էր եւ դժբախտ : Առանձնապէս սիրում էր իւր ծննդավայր Թէոդորան եւ այդ քաղաքի վրայ մեքախտիք ունի : Թէոդորան, այդ փոքրիկ անշնչալ քաղաքը յայտնի դարձաւ իւր մեծ, պաւակի շնորհիւ

Տանկապատանում տեղի ունեցած կոտորածը մեծ վիրշտ պատահանք Այվազովսկուհն եւ ցանկանալով զայրուելով մի կերպ արտայայտել , Սուլիմանից ստացած շքանշանը մի ժամանակ մտադրուեց վերադարձնել, բայց քաղաքական հանգամանքներ արկնեցին միտքը փոխելու , այնու ամենայնիւ այդ շքանշանը իւր ծառային բաշխեց եւ այսպէս իւր վրդովմունքներն արականութիւն տուեց :

Ոմանք ասում են թէ իւր ազգի համար Այվազովսկին մի մեծ բան չի արած : Նա իւր դերերը վրձինով մեծ պատիւ բերեց Հայոց ազգին , եւ այդ բանը թոյլ եւ տալիս ինձ համարել անզուգական ծառայութիւն :

Պարիզ

ԳԵՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆՑ

ՆՈՐ ԼՈՅՆՆԵՐ

Բ ,

Առ Դ Յ .

Երաժշտութիւնը Եւրոպայի տներում մէջ , առաջինէն որուն քաղցրութիւնը զիս կը վախճընէ : Անկարող եմ իրեն դիմագրելու : Ձիւնաթիւ, տկար կը զգած ինքզինքս անոր առջեւ , հինգիկ մը պէս անձնատուր կ'ըլլամ իր տիրական հմայքին : Անիկա կուզայ ինձի պատկերներով բեղմնաւոր , իտեական զեղեցկութեամբ պատկերներով , որոնք իրարու կը յաղորդեն ցնորաստու ներդաշնակութիւնով մը . դաշնակար դէմքեր անպատու արտայայտութիւնով , աչքեր անձկութեան անսահման սեւեռումով , ու մազե՛ր , մազե՛ր որ կը նուազեն , որ կուշան , որ կ'աղօթեն , մարմիններ կոյսի սպիտակ ծարաւով մը զէպ ի երկինք պաշտել - վաղնջական ծիրանիներ միտաթիկ , արտում իշխանուհիներու , զով մթնութիւններու մէջ ծածկ ձիւնապալտակ , լուսեղէն ծաղիկներ , յուգած երազներ ու անկարող բաժնուելու . մոգական հեռաւորութիւններէն ուր իրենց սրտերը կը յամենան , զիւնով՝ անկարելի բըժանքներուն քաղցրութիւնով , թոնով : Երաժշտութիւնը կ'արթնցնէ իմ մէջս վիթխարի ուժեր , հուժկու կենսականութիւն մը , կամ սխրալի մեղկութիւններ , մոլեգին գործումներ , յուսահատ եւ տիեզերական գիրկընդառնումի շարժում մը , ու երբեմն անեանալու հեշտալի ծարաւ մը : Իմ մէջս կը մտնէ անիկա , ու կը լուսաւորէ էս- ութիւնս մեծ աղւորութիւնով մը , աստղա-

զարդ գիշերուան մը պէս , կամ արեւի ու արշալոյսի ողորումով մը , որուն մէջէն սակայն անպատու թաղութիւն մը կը ծաւալի : Բայց ջանի մը տարէ ի վեր , տարիներու ուր կեանքը ճանչցայ , ու սէրը , ու սուղին պաշտումները զեղեցկութեան , տարիներ ուր անհուն խնդութիւնը ու հիւանդութիւնը անցաւ հոգիիս մէջէն ու թունաւորեց բոլոր երանութիւններս , չե՛ր կրնար հանդուրժել երաժշտութեան , որովհետեւ տիրականորէն միտքս կը բերէ անիկա հեռաւոր , մենաւոր էակը , սուգի ու աղօթքի առանձնոցը , ու սիրտս կը ճգմուի անկարելի սեւրով մը :

* .

Մեր քովի տունը կը բնակէին մայր մը , ջոյր մը եւ եղբայր մը : Երեք կեանքիս մէջ չեմ տեսած աւելի սիրալոյզ բնուանք մը : Լուռ , մաքրիմ , կաթոգին , աւետարանական քաղցրութիւնով տուն մըն էր անսոսցը : Իրենց սէրը իրարու համար այնչափ խորունկ , այնչափ տաւրամբ էր որ ա՛յ անդիմակցութեան կը հասնէր . ինքզինքներն կը մոռնային իրարու մէջ , կ'ամբողջանային իրարմով :

Ես պզտիկ տղայ մըն էի այն ատեն , հազիւ ինը տարեկան : Առջի վայրկեանէն զբաղուհիս հմայքը ազդած էր վրաս , ինքն ալ ինձի համար մայրական աղապատանք մը զգացած էր . ինձի սքանչելի պատմութիւններ կ'ընէր , ու կը պատմէր իր Պոլիս ըրած ուղեւորութիւնները , գիշերները մութ ծովին վրայ , ալիքներուն սեւ ու լուռ ու կակուղ թաւալումին վրայ , ու յետոյ իր պարահանդէսի տպաւորութիւնները կը պատմէր , առանց մորմոքի , ինչ մը յոգնած չեղտով . որովհետեւ , թէեւ հարցն 35 տարեկան , ա՛յ աղջ հանդէսները ու փողփողուհիները բացարձակապէս անտարբեր կը ծըգէին զինքը , Երկարորէն կը հարցնէին իրեն բոլոր մանրամասնութիւնները , ու ինքը ծաղրի ու գորովալի չեղաւթեան ծայրտով մը կը ծըռէր ու կը նայէր հետաքրքիր աչքերու մէջ . — Ի՞նչ հագած էիր , սիրելի հորաքոյր , ի՞նչ գոյն բոլակ հագած էիր . . .

Ու յետոյ՝

— Տեղովէ , անանկ չե՞ . աղւոր էիր , անանկ չե՞ . քեզի կը նայէին ամենքն ալ , ու աղւոր կը պարէիր : անանկ չե՞ որո՞ւն հետ կը պարէիր , ինչո՞ւ համար ա՛յ չես պարեր , ինչո՞ւ համար ա՛յ չայնայս չես հագուեր , ա՛յ պալօ չես երթար . . .